## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**22.12.2016թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԱՊՁԲ-17/3/1 թղթի մատակարարման պետական գնման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին**

ք. Երևան «06» 02 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ՝ կոմիտե/,ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 22.12.2016թ. կնքված թղթի գնման թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԱՊՁԲ-17/3/1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 4.2 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.1.2 և 4.2 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ թղթի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության (Պայմանագրի թիվ 3 հավելված) հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2017թ.-ի դեկտեմբերի 25-ը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան________________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Սմարթլայն>>ՍՊԸ
ք.Երևան,Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝

Տ.Ղարիբյան________________
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված*
*«22» 12 2016թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԱՊՁԲ-17/3/1*
*ապրանքի գնման պայմանագրի*
*« 06 » 02 2017թ. կնքված թիվ 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
**թղթի**

հազ. դրամ

| Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման գումարը 2017թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| Թուղթ Ա4 ֆորմատի | 800.0 | 1600.0 | 2800.0 | 4000.0 | 6200.0 | 7400.0 | 8600.0 | 9800.0 | 11000.0 | 12200.0 | 12780.3 | 12780.3 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան ____________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Սմարթլայն>>ՍՊԸ
ք.Երևան,Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝

Տ.Ղարիբյան____________
(ստորագրություն)

Կ.Տ.